գեղ (50), Մ. Փօռի ֆրանսիական Գոլէճը. Եթէ մոռացումները ճշտուին, թերեւս 6,000-ի յանգի դպրոց յաճախող Հայ-լուսաւորչական տղոց թիւը).

Այս շահեկան Վիճակացոյցը պատրաստած է Ալեքսան էֆ. Արփիարեան, Ուսումնական Խորհրդոյ քարտուղարը, Ս. Պատրիարք Հօր հրահանգներուն համեմատ. Մեծ տախտակի մը ձեւով պիտի հրատարակուի ի մօտոյ.

Վերադարձող Հայ գաղթականք. — Դատական և Կրօնական պաշտօնարանէն Ապր. 27 թուով Պատրիարքարան ուղղուած Թէզքէրէ մը, ի պատասխանի Պատրիարքարանի թագրիրին, կծանուցանէ թէ՝ ըստ Կայս. Իրատէի՝ սա երեք որոշումները տրուած են ի մասին Հայ գաղթականներու և ճամբորդներու որք երթեւեկել կկամին. (Ա.) Արտասահմանէն Կ. Պոլիս վերադարձող իւրաքանչիւր Հայու համար, երբ Պատրիարքարանի կողմէ ապահովութիւն տրուի, և իր բնակելիք թաղին Մուխթարն և թաղին երեւելիներէն երկու հոգի երաշխաւոր ըլլան, պիտի արձակուի. (Բ.) Ընտանիքով դարձող գաղթականներուն նկատմամբ, երբ նոյն ընտանիքին պետին համար Պատրիարքարանի կողմէ ապահովութիւն տրուի, և իր բնակելիք թաղին Մուխթարն և թաղին երեւելիներէն երկու հոգի երաշխաւոր ըլլան, իր ընտանիքին անդամներն ալ իրեն հետ մէկտեղ պիտի արձակուին առանց ուրիշ գործողութեան. (Գ.) Գալով վերադարձող այն գաւառացի գաղթականներուն, որք իրենց գաւառին մէջ առեւտրական գործ կամ կալուած ունին, անոնք Պոլիս պիտի չպահուին, այլ ապահովութեան ու երաշխաւորութեան ինչ գործողութիւն որ հոս պիտի կատարուէր Պատրիարքարանի միջոցաւ, Առաջնորդարանի միջոցաւ պիտի կատարուի իրենց գաւառին մէջ, ուր պիտի ղրկուին անմիջապէս.

— Կարնոյ առաջնորդական Տեղապահ Տ. Զաւէն Ծ. Վ. անցեալ ամսուն մէջ կատարեր է Կարինէ $1\frac{1}{2}$ ժամ հեռի Ս. Լուսաւորչի Վանքին վերաշինութեան հիմնարկէքը.

— Ս. Պատրիարք Հայրը Վանայ նահանգին Որբանոցներուն թիւը չորսի բարձրացուց այս օրերս. Կարգադրեց որ յատկապէս աղջկանց համար Որբանոց մը բացուի Սալնապատայ Ս. Գրիգորի վանքին մէջ (Կարմրաւորայ վանքին մօտ), որուն ամսական հինգ ոսկի յատկացուց, և Նարեկայ վանքին մէջ ալ մանչերու համար Որբանոց մը բանալ կուտայ, Աղթամարայ կաթողիկոսութեան իրաւասութեան ներքեւ, ամսական 10 ոսկի նպաստ յատկացնելով.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

Ի՞ՆՉ Է ԿՐԹՈՒԹԻՒՆԸ. *

Ով որ միշտ ջանք անելով է ձգտում,
նա է արժանի փրկութեան:
Գէօթէ.

Լեռների վերայ միայնացած ապրում էր մի իմաստուն իւր որդու հետ, որի հոգին և սիրտը առատ ձիրքերով օժտուած էր: Հայրը իւր զաւակին դաստիարակել էր ամենայն խնամքով: Նա զարգացրել էր նորա բոլոր կարողութիւնները, հրահանգել էր նորան ամենայն առաքինութիւններով, ուսուցել էր սէր առ Աստուած և առ մարդիկ և բաց էր արել նորա աչքը բնութեան հրաշալիքների և գեղեցկութիւնների համար. Եւ երբ որ տղան պատանի դարձաւ, հայրը արձակեց նորան, որ գնա աշխարհք մտնէ, մարդ տեսնէ. «Չլինի թէ գանձեր դիզելու կամ փառքի ու պատուի ձգտես ագահաբար», խրատեց նորան. «Գնա՛ և Կրթութիւն փնտռիր. ահա այս է իմ կամքը, իսկ երբ որ գտնես, դարձեալ եկ մեր լեռները. Ո՛վ գիտէ, այն ժամանակ գուցէ ինձ պէս ունայն համարես նիւթական աշխարհքի կարօտը».

Պատանին գործօնալից և հնազանդ սրտով խոստացաւ փարուել հօր պատուէրի համեմատ և չհանգստանալ, մինչև որ խոստումը ճշգութեամբ չկատարէ: «Անհոգ եղիր ես շուտ կը վերադառնամ», բացականչեց նա վստահութեամբ, և սկսեց սարերից իջնել դէպի մարդիկ.

Եւ ահա իրան հանդիպեցաւ մի վեհապանծ, փառահեղ կին, որ ընդ առաջ էր գալիս մեծարոյ և արգոյ կերպարանքների երկար թափօրով. Նոցանից ոմանց նա ճանաչեց. Սոկրատէսին, Պլատոնին և Արիստոտէլին իսկոյն նշմարեց այն շարքի մէջ, որ թւում էր թէ անվերջ պիտի լինի.

«Արդեօք երա՞զ է այս», գոչեց նա խնդութեամբ. «Ահա նա ինքը». Եւ անկասկած սրտով

---

* „Umschau" շաբաթաթերթը մեզանում և եւրոպայում «Կրթութեան» մասին խմբագրական գրելու համար- հրաւէր մեզանում մի հանդէս և օր. Կաստրիլիկ Տիսկրմանին, որի յօդուածը թարգմանելով՝ ներկայացնում ենք մեր ընթերցողներին:

դարձաւ ազնուաշուք Առաջնորդուհուն. «Հէնց քեզ փնտռելու առաքել են ինձ։ Ուրեմն հաճիր հետևել ինձ»։

«Ե՞ս հետևեմ քեզ», ընդմիջեց նա ամբարտաւանութեամբ և վերէն ի վայր նայելով. «ես ոչ ոքի չեմ հետևում։ Այլ ինձ են հետևում»։

«Բայց դու Կրթութիւնը չե՞ս», հարցրեց նա խեղճացած ձայնով։

«Ես եմ Գիտութիւն», սիգարար վրայ բերեց Կինը։

«Իսկ արդեօք կարո՞ղ ես ինձ ասել, թէ ո՞ր տեղ է գտնվում Կրթութիւնը»։

«Անշուշտ», քաջալերեց Կինը. «Նորա բնակութիւնը շատ հեռու և դժուարահաս է. սակայն ճանապարհը իմ սահմաններով է անցնում։ և եթէ ուզենաս եօթը տարի ծառայել ինձ հաւատարմութեամբ, այն ժամանակ քո առաջ կը բացուի այդ ճանապարհի դուռը»։

«Ծանր պայման է», ասաց նա հառաչելով. «Բայց պատրաստ եմ յանձն առնելու։ Առ ոսոս քո կը նստեմ։ իսկ դու ինչ որ սովորեցնելու բան ունիս՝ սովորեցրու ինձ»։

Կինը ժպտաց. «Այնքան բան սովորելու համար մարդու կեանքը հերիք չի լինի»։

«Հապա ի՞նչպէս պիտի ծառայեմ քեզ»։

«Իմ աշակերտներից մէկին կընտրես քեզ վարժապետ։ նորանից կը տեղեկանաս, թէ ի՞նչ պէտք է անես»։

Այդպէս էլ կատարուեցաւ։ Պատանին ջանքով սովորում էր և վարժապետը վաղ արձակեց նորան աշակերտութիւնից, որպէս զի նա միւս ուսուցիչներին ևս լսէ։ Այլ նա իւր անձը այնքան բախտաւոր էր սեպում իրան վիճակուած այս ընտիր կաճառի մէջ, և այնքան սիրով ու յարգանքով էր մտիկ անում իմաստուններին, որ փոխանակ եօթը տարու՝ յօժար էր մինչև կենաց վախճանը դեգերել նոցա շրջանի մէջ։ Սակայն ուխտած խոստումը առաջ մղեց իրան, և վերջապէս այստեղից հեռացաւ առատ առատ պարգևներով։

Ճեմելով Նորա դէմ ելան իններ չքնաղատեսիլ Կոյսեր, ոչ այնպէս լուրջ կերպարանքով, ինչպէս որ Գիտութիւնն էր, այլ խնդահրաւէր յորդորմամբ։

«Ես փնտռում եմ Կրթութիւնը», ասաց նա պարկեշտութեամբ. «չէ՞ք կարող ինձ ասել, թէ ո՞ւր է գտնվում այն»։

«Ճիշդ այն ճանապարհի վերայ ես», պատասխանեցին նոքա. «շարունակութեան շաւիղը մեր պարտիզիցն է ձգվում։ Եթէ այս տեղ հանգիստ առնես, մենք քեզ ցոյց կու տանք այն շաւիղը»։

Երջապատեցին Նորան և տարան մի դրախտանման մարգագետին, քաղեցին Նորա համար գոյնզգոյն ծաղիկներ և իւրաքանչիւրը աշխատեց իւր արուեստը յայտնել Նորան։ Առաքինութեամբ, ոգևորութեամբ, յափշտակութեամբ մտիկ էր անում նա՝ խելամուտ էր, հրահանգվում էր։ Ընդհակալից քոյրերի աշխարհքն ևս այնչափ հաւանեց նա, որ հիմա նոցանից ևս չէր կարողանում բաժանուիլ։

«Մեծ տրտմութիւն է ինձ համար, որ ձեզանից պիտի հեռանամ», վճռեց վերջապէս ասել։ «Թոյլ կու տաք որ տխրութեան և լքեալ վիճակներումս կրկին այցելեմ ձեզ, որպէս զի սթափուիմ և զգաստանամ»։

Նոքա ամենայն հաճութեամբ հրաւիրեցին Նորան, որ երբ և կամենայ՝ միշտ գայ իրանց մօտ։ և Մուսաները տուեցին Նորան մի մի յիշատակ։ Ապա ուղեկցեցին Նորան մինչև իրանց սահմանավայրը և ցոյց տուեցին իւր ցանկացած շաւիղը։

Շարունակելով ճանապարհը՝ նա մտաւ մի վայրենի անտառի խորքերը։ Թէպէտ մենակ էր, բայց չէր վախենում։ Ծառերի շրշիւնը, հողմի մռնչիւնը, փտակի կարկաչը խօսակցում էին Նորա հետ և թռչունների ձայնը նա լաւ էր հասկանում։ Ո՜հ, ինչ գեղեցիկ են այս վայրերը։ Այս ամենը տեսնելով, միթէ հնարաւոր պիտի համարէր, թէ Կրթութիւնը պատսպարուած լինի այսպիսի զուարճալի տեղում։ Եւ որքան որ անտառում փնտռեց, իրօք երբէք չգտաւ այն։

Եւ վերջապէս երբ որ նա արձակ դաշտը դուրս եկաւ, դէմ առ դէմ երևեցաւ իրան մի մեծ քաղաք, որ տեղից մարդկանց բազմութիւն էր գալիս։ Բոլորի կարապետն էր մի Նորաձև պճնած և երեսը շպարած Տիկին։ Սորան զանց առնելով, նա շտապում էր հեռանալ։ Հաւաստի լինելով, թէ սա չի կարող լինել Կրթութիւն. իսկ սա խօսակցելու մօտեցաւ և մինչև անգամ դառնալով՝ քայլեց Նորա ճանապարհի ուղղութեամբ։ Հետը աշխուժարար զրուցելով։

«Ո՞վ ես դու, Տիկին», հարցրեց նա քաշուելով։

«Ես Արդի կեանքն եմ։ Այժմեական կեանքը», պատասխանեց Տիկինը. «Ինձ մի մերժիր։ Մինչև անգամ եթէ ինձ չես հաւանում, գէթ աշխատիր ի մօտոյ ճանաչել ինձ։ և անշուշտ մի օր կը գնահատես իմ արժանիքը»։

«Թո՛ղ խնդրեմ, որ հեռանամ», աղաչեց նա։ «Ես փնտռում եմ Կրթութիւնը։ և ոչ թէ քեզ»։

«Միայն ես կարող եմ կարապետել քեզ դէպի Կրթութիւն»։

«Նոյնը ինձ արդէն ասել են Գիտութիւնն ու Արուեստները։ Բնութեան մէջ էլ ի զուր փնտռեցի այն», վհատած սրտով տրտնջեց նա։

«Եւ ո՞վ պիտի կարողանայ օգնել քեզ Այն գտնելու, եթէ ոչ ես», մխիթարեց Տիկինը Նորան։ «Այժմ սիրտդ պնդացրու։ իսկ յարմար առիթով ինձ աւելի լաւ կը ճանաչես»։

«Բարի է, առաջնորդիր ինձ»։

Տիկինը ուղեկցեց Նորան մեծ քաղաքի ամէն թաղերում։ Մտաւ Նորա հետ աղքատների տնակներն ու հարուստների պալատները, գործարաններն ու արհեստանոցները։ Նորա առաջ բաց արեց բոլոր դռները, բարձրութեան և խոնարհութեան պատըսպարանները։ Նորա ակնարկը դարձնել տուեց դէպի մեղանչման և մոլորութեան անդունդները, և անձնուէր սիրոյ խաղաղութեան հանդիստատեսս կացոյց Նորան։ Իսկ ինչ որ Տիկնոջ առաջնորդութեամբ տեսաւ, այն ամէնը Նորա սիրտն այնչափ շարժեց, որ նա սկսեց մոռանալ, թէ իսկապէս ինչու է թափառում և ինչ է եկել խոյզ և խնդիր անելու։ Բայց և այնպէս դեռ ևս չափից աւելի շատ բան կար տեսնելու, լսելու, զգալու և իմացուելու։

«Դու ինձ սիրեցիր, այնպէս չէ՞»։ հարցրեց վերջապէս իւր Առաջնորդուհին։

«Այո՛»։ անդրադարձրեց նա յուզուած, կուզէի միշտ ուղևորուել քո ձեռքը բռնած»։

Տիկինը գլխով սաստեց։ «Արդեօք չյիշեցնե՞մ քեզ, թէ ինչ էիր փնտռում»։

«Դու իսկ ես, ինչ որ ես փնտռում եմ»։ գոչեց նա այլայլած»։

«Ո՛չ, ես չեմ։ բայց դու արդէն խիստ մօտեցել ես սրտի փափագիդ»։

Այս լսելով նոր ոյժ առաւ նա և շարունակեց թափառելը։ Նա երևակայում էր, թէ փափագածն արդէն աչքի առաջ նկարուած է տեսնում։ Այդ իսկ հրապուրով նա չափեց ու չափչփեց ցամաքներ և ծովեր, անապատներ և լեռներ։ Այն ուրուականը, որից լոյս էր ճառագայթում, թուում էր թէ ձեռքով բռնելու չափ մերձեցել է։ բայց անոր հասնելու նա չէր կարողանում։

Այսպիսի տանջանքներով ելաւ նա ծովի ափին մեկուսացած բարձրութեան վերայ։ Եւ երբ որ դէպի վայր նայեց ջրի երեսին, մէջը ցոլացած տեսաւ իւր դէմքը արդէն սպիտակ մազերով ալևորուած։ Մի՞թէ, զարհուրելով մտածեց նա. մի՞թէ դեռ նպատակիս չհասած՝ կեանքից հրաժե՞շտ պիտի առնեմ։ —Առանց դադար առնելու, վերկացաւ շտապով իւր ճանապարհը շարունակելու։ Էլ ժամանակ չունէր կորցնելու։

Սակայն թափառականի քայլը դանդաղեց։ Նորա հոգու մէջ ծփուեցան-կոծուեցան յիշողութիւնները։ Մի՞թէ ծանօթ շաւիղներ չե՞ն ասում. մի՞թէ այս այն վայրերը չե՞ն, ուր որ նա իւր մանկութեան երազներ է երազել։ Եւ երբ բարախած սրտով շրջեց և ժայռի միւս կողմը դարձաւ—ո՜հ կենդանի կանգնած տեսաւ հէնց այն խրճիթը, որ այնքան անգամ կարօտակէզ փափագել էր կրկին տեսնելու։ Թուլացած ոտքերով հասաւ այն տեղը և անշնչացածի պէս փռուեցաւ գետնին։ Ոյժերն սպառուել էին. նա քուն մտաւ։

Եւ եկան խառնուեցան-խառնուեցան այն բոլոր կերպարանքները, որոնց նա հանդիպել էր և սիրել էր, այն բոլոր դէպքերն ու իրողութիւնները, որոնց ականատես էր եղել իւր կենաց ընթացքում։ բոլոր ուրախութիւններն ու վշտերը, որով ապրել էր . . . և անոնք ձեռք ձեռքի տուած պար բռնեցին Նորա խշտիքի շուրջ, ապա գափնեայ պսակ դրին Նորա գլխին և ցնծութեամբ աւետեցին իրան, թէ նա արդէն հասել է նպատակին։

Ապշեցած վեր բարձրացրեց կոպերը։ Իւր առաջ բացուեցաւ մի մեծ սիւնազարդ կամարակապ սրահ։ և մինչև որ աչքերը լուսին ընտելացան։ մէջը նկատեց մի շնաշխարհիկ Դշխուհու կերպարանք։ Սորա աչքերը փայլում էին աստղերի պէս։ և դէմքի վերայ ճաճանչում էր Իմաստութիւն։ Սէր և Արդարութիւն։

«Մի՞թէ դու չե՞ս իմ փնտռածը»։ սքանչացած հարցրեց նա։ ի ծունր իջնելով պայծառ տեսիլի առաջ։

«Ես եմ»։ ասաց նա քաղցրութեամբ։ «Քո սրտի մէջ բնաւորած կարօտը ինձ համար՝ ուղեկցեց քեզ դէպի վեր։ դէպի բարձրութիւնները։ ուր որ ես կամ»։

«Ամբողջ կեանքս քեզ նուիրեցի։ միշտ հետամուտ եղայ։ բայց չկարողացայ քեզ գտնել»։

«Ամէն մի հետամտութիւն և փորձ արդէն ինքնին մի գիւտ է»։ մխիթարելով ընդմիջեց Դշխուհին։

«Բայց աւա՜ղ։ որ միայն այժմ երևում ես ինձ։ երբ որ աչքերս արդէն ընդ միշտ փակուելու վերայ են»։ գոչեց նա դառնութեամբ։ «Ո՜հ, եթէ մի կեանք էլ ունենայի։ որպէս զի կարողանայի քեզ պաշտել և երկրպագել»։

«Այն ժամանակ այդ ճամբորդութիւնը նոր ի նորոյ պէտք է սկսէիր»։

«Ա՞յս ճանրորդութիւնը։ ուր միշտ մոլորուե՞լ եմ»։

«Վա՜յ քեզ կարճատեսիդ»։ ասաց Դշխուհին ժպտալով։ «Քո քայլերին ուղղութիւն տուողները՝ ո՞չ ապաքէն իմ Առաքեալներն էին»։

«Քո Առաքեալնե՞րը։ Ուրեմն դո՞քա՞ պսակեցին իմ գլուխը։ հարցրեց երջանկացած»։

Դշխուհին անոյշ երեսով հաւանութեան նշան տուեց։ «Դոքա քեզ ցոյց տուին կարօտած շաւիղդ։ Իսկ հիմա։ երբ արդէն նպատակիդ հասել ես։ ինքդ անձամբ տեսնում ես ինձ»։

Մի աննկարագրելի երանութեամբ լցուեցաւ նորա սիրտը։

«Ես քո աչքերը փարժեցրեցի տեսնել։ ականջներդ—լսել։ որպէս զի անոնք կարողանան իրերի ներսը թափանցել։ ժամանակների սրտի զարկը իմանալ»։ շարունակեց Դշխուհին։ «Քո հանճարին խորութիւն և պայծառութիւն տուեցի։ քո հոգուն՝

մեծութիւն և մեղմութիւն, քո սրտին՝ փափկութիւն և զգայնութիւն։ Քեզ սովորեցրի աշխարհը հանկանալ։ Դու բարձրացար և նպատակիդ հասար։ Հիմա կարող ես հանգստանալ։»

Խանդաղատանօք մերձեցաւ Դշխուհին՝ մի անգամ ևս իւր լուսով լուսաւորեց նորան և ան յայտացաւ։

Խաղաղութիւն էր փայլում ծերուկի դէմքի վերայ։

Ս. Մ.

ԸՆԼ ԵՒ ԱՅԼՔ։

Աղխատների գործադուլը։—Արևելեան Պրուսիայում սովորութիւն է դարձել, որ աղքատները ուրբաթ օրերին անշուշտ տնէտուն շրջում են—2 պֆենիգ (1 կոպէկ) ողորմութիւն ստանալու։ Մօտ ժամանակներում Ս. քաղաքի աղքատները, ի նկատի ունենալով, որ ողորմութեան սահմանած չափը խիստ ընչին է և չի համապատասխանում արդի կենցաղավարութեան, որոշեցին բարձրացնել իրանց վաստակը և այս վախճանով գործադուլը ձեռնտու համարեցին։ Ուրբաթ օրերից մէկին նոքա սովորութեան համեմատ տնէտուն մտան չեկան, այլ մի պատգամաւոր առաքեցին, որ բոլոր բնակիչներին յայտնէ, թէ եթէ այսուհետև ողորմութիւնը 4 պֆենիգի չբարձրանայ, նոքա ամէնքը վճռել են քաղաքից հեռանալու։ Ժողովուրդը, վախենալով որ կը զրկուի «աստուածընտիր մարդիկներից», հաւանութիւն տուեց նոցա համեստ պահանջին, և հէնց հետևեալ օրը՝ աղքատները եռանդով շարունակեցին կատարել իրանց բարեպաշտական պտոյտը։

* * *

Կաթոլիկների օրհնած ջուրը։—Մի բժիշկ „Semaine médical"-ի մէջ հրատարակել է կաթոլիկ եկեղեցիների օրհնած ջրի առողջապահական հանգամանքները։ Որովհետև եկեղեցիներում օրհնած ջուրը անդադար շոշափումի է շատ անգամ խիստ անմաքուր ձեռքերով, բժիշկը ենթադրեց, թէ օրհնած ջուրը երբեմն կարող է վարակիչ հիւանդութեանց տարածման նպաստել։ Այս վախճանով նա զննեց մի բազմամարդ եկեղեցու օրհնած ջուրը և մէջը գտաւ տեսակ տեսակ բակտէրիաների (usramիլոկոկների, usrեպսոկոկների, ցոիբացիլների, լեոմիլեռևսի բացիլների և այլոց) մեծամեծ բոյլեր։ Վերջինների ներդրոծութիւնը կենդանիների վերայ փորձելով, նա համոզուեցաւ, որ իրոք դիմsերիսի (կեղծամաշկութիւն կոչուած բկացաի) բացիլներ են։ Եւ եթէ յիշենք, թէ բարեպաշտները շատ անգամ օրհնած ջրով թրջած մատները շրթունքներին են քսում, կարելի է երևակայել, թէ ինչպէս նոյն ջրի ամանը հիւանդութեան տարափոխիկ միջոց է դառնում։

* * *

Մի մեծագործ ապաստանարան մանուկների համար։—Պատուական աղքատանոցներով հռչակուած Մեծ Բրիտանիայի լաւագոյն կազմակերպուած և ընդարձակագոյն աղքատանոցը Վալտոնումն է (Walton=on=the=Hill), որ 3000 բնակիչների համեմատ ծաւալուն։ Այս սքանչելի հաստատութեան նշանաւոր բաժինն է կազմում մանուկների ապաստանարանը, որ իւր տեսակի մէջ միահատիկ պիտի համարուի։ Այդ մասը բաղկացած է 18 տներից յատկապէս մանուկների բնակութեան համար, կառավարչի և բարապանի բնակարանից, հիւանդանոցից, դպրոցից, խոհանոցից, լողարանից, բաղանիքից, ժողովարանից, շաբաթարանից, նախօթևանքից և պէսպէս արհեստանոցներից։ Այս «մանկական գիւղ» բոլոր շէնքերը գեղեցիկ են և կառուցած են քարից կամ աղիւսից։ Մի լայն ծառափողոցով բաժանուած են մանչերի տնակները աղջիկների տնակներից։ Իւրաքանչիւր տնակի տարածութեան մէջ կարող են ամենայն դիւրութիւններով և յարմարութիւններով պատսպարուիլ 30 մանուկ։ Էլ չենք հաշուում իւրաքանչիւրի գեղեցիկ վարդերով զարդարած ծաղկանոցն ու խաղալու համար ընդարձակ գաւիթը, որ մասամբ ծածկուած է—վատ եղանակին մանուկները բացօթեայ չթողնելու համար։ Փոքրիկ աղջիկների տնակները յանձնուած են մի մի «տանտիկնոջ» խնամքին։ Հարթած հրապարակի վերայ գտնվում է մի մեծ սեղանատուն։ Խոհանոցի հանդերձանքներն ու սարքուածները վերջին կատարելագործութիւններ են։ Փոքրիկների մաքրութեան, առողջութեան և հրահանգութեան վերաբերեալ տնօրինութիւններն էլ ոչ մի պակաս բան չունին։ Առաւելապէս ուշադրութիւն է դարձրած, որ սորվեցնեն լուացք լուանալ, արդուկել, կարել և տան միւս բոլոր աշխատութիւնները կատարել։ Տնակի բոլոր մատակարարութիւնները «տանտիկնոջ» և իւր որդեգիրների ձեռքով են կատարվում։ Ննջարանները վերնայարկումն են, ուր նոյնպէս պայծառ լուսի պէս յայտնի երևում է մարդասէր ողորմածութիւնը։ Հասակաւոր աղջկերքն ունին ձիւնափայլ սպիտակեղէններով հանգեր-